ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ՀՀ Շիրակի մարզ, ք. Մարալիկ, հեռ. h0242- 2-16-58, ani.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 859-Ա

<<07>> հոկտեմբերի 2024 թվական քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՌՆԱՂԲՅՈՒՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 08-100-0977-0001, 08-100–0065-0002, 08-100-0978-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԵՐՈՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԱԲԱՐ 0.10545 ՀԵԿՏԱՐ, 0.61874 ՀԵԿՏԱՐ, 0.02553 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՆԵՐՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդված 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի և համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգի>> 24-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Քաղաքաշինության կոմիտեի ղեկավարի 2024 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 01/11.1/14988-2024 գրությամբ ներկայացված դրական եզրակացությունը.

Որոշում եմ

1. Հայաստան Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Սառնաղբյուր բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, համայնքի սեփականությունը հանդիսացող՝ 08-100-0977-0001, 08-100–0065-0002, 08-100-0978-0001 կադաստրային ծածկագրերով համապատասխանաբար 0.10545 հեկտար, 0.61874 հեկտար, 0.02553 հեկտար մակերեսներով բնակավայրերի նպատակային նշանակության, ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության հողամասերի գործառնական նշանակությունը փոխադրել հասարակական կառուցապատման գործառնական նշանակություն՝ այդ հողամասում պետական ծրագրի

շրջանակներում 567 աշակերտ/տեղ հզորության հանրակրթական նոր դպրոցի կառուցման համար:

2. Սույն որոշման 1-ին կետով նախատեսված հողամասի գործառնական նշանակության փոփոխության կապակցությամբ հողերի ընթացիկ հաշվառման տվյալների հիման վրա համայնքի հողային հաշվեկշռում և տարածական պլանավորման փաստաթղթում կատարել համապատասխան փոփոխություն:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ**

/Պարտականությունները կատարող/

<<07>> հոկտեմբերի 2024 թվականի
քաղաք Մարալիկ